Տ. ԱՌԵՆ ԱԲԵՂԱ ՇԱՀԻՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Շանթ)

Ծնվել է 1970 թ. հունվարի 20-ին, Բաղդադ քաղաքում:

Նախնական ուսումը ստացել է ծննդավայրում:

1989 թ. ընդունվել է Քերբուկ քաղաքի մեխանիկական գիտությունների քոլեջ և 1992-ին ավարտել այն:

1993 թվականից մասնակցել է նաև Իրաքահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի կազմակերպած հնգամյա դասընթացներին: Այս ընթացքում կրթությունը շարունակել է Բաղդադ քաղաքի «Բաբելոն» հոգևոր համալսարանում:

1995 թ. դեկտեմբերի 29-ին, ձեռամբ առաջնորդ Սրբազան Հոր, արժանացել է կիսասարկավագության, ապա 1999 թ. հունվարի 29-ին՝ սարկավագության աստիճաններին:

2000 թ. մարտի 2-ին Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, ձեռամբ Իրաքահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Հոգեշնորհ Հայր Սուրբը պաշտպանել է թեզ «Ավետարանը և Ղորանը» թեմայով՝ ստանալով լավագույն գնահատական: Արժանացել է նաև «Բաբելոն» համալսարանի Աստվածաբանական և Իմաստասիրական պսակավորի վկայականի:

Այժմ, նախաձեռնությամբ և օրհնությամբ Սրբազան Հոր, պատրաստվում է գնալ Հռոմ՝ իր աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու համար: